Աղաթամ անգեղոս՝ պատմմլով Անակայ ցեղի կոտորման մասին, ասում է² թէ “միայն երկուս մանկանու վորքիւնս յորդւոյն Պարթեւին պրծուցեալ ոնն ապրեցուցանէր ի ձեռն գայեկաց ուրումն զմին ի կողմանս Պարսից եւ զմին ի կողմանս Յունաց առեալ փախչին ոյ, առանց յիշելունոցա անունները: Յաջորդ էջերից Երեւում է, որ Յունաց կողմերը փախցրած մանուկը՝ այնաեղ կրթուելով քրիստոնէական ողով, Գրէնոր է կոշուել. բայց թէ ի՞նչպէս էր Պարսկաստան փախցրած մանուկի անունը եւ ինչ եղաւ նորա վիճակը, ոչինչ չէ ասում պատմագիրը:

Սորանից ոչ աւելի աւանդում է եւ Խորենացին, թէ եւս առ իւր ձեռքին ունէր Արտիթէսի թուղթը Լուսաւորչի վարուց մասին³:

Միայն Սեբէոսն է, որ Հաղորդում է, թէ Խոսրովի կոտորածից ազատուած մահապարտ Անակայ մի զաւակին փախցրին գայեակները Պարսից ուսումն. “Եւ կատարեաց արքայն (Արտաշիր) ի վերայ նորա զարգեւու խոստցեալո Հօրն նորա Անակայ զաւն իսկ զՊարմեւական զՊալհաւն անդրէն գարձուցեալ նոտիտուր մեծարեաց”⁴: Բայց թէ ի՞նչ էր այդ մանկան անունը՝ Սեբէոս նոյնպէս լուսմ է:

Ո՞րտեղից ուրեմն եւ ի՞նչպէս յայտնուեցաւ Գրիգորի եղբայրը Սուրբնէնի անունը:

¹ Անդ:

² Անդամանչեղ, էջ 41:

³ Խորինացաւոյ Պատմմ. Հայոց, թ. 80:

⁴ Սեբէոս, էջ 36:

Ինձ թվաւմ է, թէ առա ծագման սկզբնական շարժահիմքը պէտք է տուած լինի Լուսաւորչից յեղի՝ “Աս-ըէնի-Դուհուր” կոչումը, որ Ն. գրառոց շատ յեպոյ ապրող հայ գրադէաներից ումանկ նախ իրեն՝ Լուսաւորչին եւ ապա նորա եղրօն են վերադրել:

Զենորի մի քանի ձեռագիր (Երկուոր՝ Ա. Էջմիածնի եւ մէկը՝ Ա. Ղազարու) ապագրի՝ “իսկ զմիւն եղայր նորա (Գրիգորի), որ կոչէր Աս-ըէն անունը խօսքերին անմիջապէս աւելացնում են՝ յայտնի չէ, ինչ տեղից առնելով՝ “իբրև ուսուուն իւրցյ եւ կամ” արյո չուսուունն էին եգեալ Աս-ըէն” . . . որից երեւում է Աս-ըէն անուան առնչութիւնը զահլաց յեղի Աս-ըէն կոչման հետ: Աւելի արժանի է ուշագրսութեան Զենորի մի այլ ձեռագրի հետաքրքրական բնիթերցուածը¹ (ըստ իս՝ քան նախունթաց յաւելուածները հնագոյն) վերաբերեալ Գրիգորի հեթանոսական անուանակազութեան: “Եւ մլրտեալ Գրիգոր, զրո մայր եւ հայր նորա Անակշատ² Աս-ըէն կոչէին:” Այստեղ եւս կրկնվում է առհային Աս-ըէն կոչումը, բայց վերաբերութեամբ Գրիգորին եւ ոչ թէ իւր եղրօրը, որին եւ վերացրել են այդ կոչումը յետին բնդօրինակազները՝ ձգտելով մի կերպ որոշել Անակի միւս որդու անյայտ մնացած անունը:

Իսկ Սուրէնի ձենաց (որ՝ ինչպէս վերը յիշեցինք, մի քանի ձեռագիր՝ “Ձահէնի անին եւ ոյլը՝ “Ձենաց եւ Դարդահնդաց”):) Երկիր դնալը եւ այստեղ թագաւորելը, մասսմբ միայն անհաւատի պէտք է համարել: Արդէն Ազաթանգեղի աւանդածը՝ մանուկներից մէկի Պարսկաստան փախցնելու եւ Արտաշը խօսաման մասին եւ մանաւանդ:

¹Տես “Ագաթանգեղ” եւ իւր բազմագարեան գաղտնիքն Հ. Ա. Սարգսուն, Վ. ենեաին, 1890, էջ 37:

²Պահանջման Անդրէն Անդրէն Անակի ուրախութիւն է նշանակում:

Մերէսոի բայրածակ միայսութիւնը՝ “Շահ կայալ մեծարեաց” (Արտաշէր), — առ զիք են տուել թագուար անաւաշելու Սուրէնին: Բայց թէ ինչպէս ձենաց թագաւոր, երբ որ Պարսից արքայի խօսաման համաձայն՝ “Պահանջման աւելի պէտք է նա լինէր, եւ ինչ տեղից է յայտնի, որ նա 19 տարի թագաւորեց Ճենաստանում, այս մնաւմը է անստուգելի:

Մնացեալ անձերն եւս հազիւ սորյդ լինին:

Ո՞վ է Անսակի քոյր Խոսքովունէն: արդեօք Լուսաւորչի հետ Յակոբի ազգակցութիւնը պնդելու նպատակավ չէ՝ հնարած այդ անհնաւորութիւնը, որպէս եւ նորա անունը՝ արդեօք նմանութեամբ Տրգատի քոյր՝ մեծ օրիորդ Խոսքովունի հազմանած: Թէ՛ Ուխանէսի, թէ՛ Վարդանի եւ թէ՛ Լուսաւորչի Կերբողեանների³ անդեկութիւնները այս մասին յետին են եւ անշաշա Զենորի անմիջական աղբեցութեամբ առջացած:

Ո՞վ է Խոսրովիկնատի ամուսին Զառանչը Հեքիանի Բահաւուրը, որին մի քանի առող յետոյ Հեքիանիւննի եւս կոչում է հեղինակը, արդեօք չկայ որեւէ առնչութիւն առա եւ Սերէսոի հալորդածի հետ: Պարսից մեծ իշխան Զառանչը հի² եւ Քուշանաց ազգի ու Հեքիանիւննի արդաշի³ մասին՝ ի նկատի ունելով առհասրակ Զենորի ծանօթութիւնը Բաղրատաւեանաց եպիսկոպոսի Պատմութեանը, ինչ պէս վերը տեսանք արդէն: Զառանչը անուան առաջանալուն առանց աղբեցութեան չէ երեւում ինձ նաեւ Ասունկատացու⁴ պատմածը Ազաւանից համանուն արքայի մասին:

Ընդհանրապէս պէտք է գիտել, որ Զենոր մեծ զիւրութեամբ բաշխում է աջ ու ձախ ար-

¹Ալիքիրք Հայկականը, էջ 1:

²Սէքենս, էջ 72:

³Անդրէն, էջ 67:

⁴Պատմ: Ազաւանից Արևանեւի Կուշանացաւացուաց, Հրամ, էջին, էջ 136:

քայական տիտղոսներ. թագաւոր է Լուսաւորչի եղբայր Սուրբնը, թագաւոր է Խոսրովուհու ամուսինը Քոչանցի, թագաւոր է գարձեալ Յակոբի Հայրը Տէրն, թագաւոր է Նորա սպանիչ Լինաց Ռէնէ, թագաւոր է վերջապէս Յակոբի Ասկդնէ ուշին՝ որդին (ըստ յետնոց՝ Հրաչէ կամ Հըշէ):

Ո՞չ է Տէրն թագաւորը, որ Խոսրովուհու ամուսինն է կոչվում, թէեւ մի քանի տող առաջ նոյն հեղինակի վկայութեամբ Քոչանցին էր Նորա ամուսինը: Զենորի ձեւագիր եւ ապագիր բոլոր օրինակների այս միարեքան հաստատած անպատշաճութիւնը ձգտում է ուզզել Ուխտանէս¹ Լուսաւորչի հօրաքոյր Խոսրովուհուն ընդունելով ոչ թէ ին Քոչանցին, այլ սկզբան Քոչանցին², որով Խոսրովուհու ամուսինը կամ Յակոբի Հայրը Տէրնն է մանաշվում: Ի՞նչ էր սորա ծագումը եւ մրտեղ էր Նորս թագաւորութիւնը, անյայտ է մեզ:

Կոյնպէս անծանօթ է Լինաց Ռէնէ թագաւորը, որի անունը ձեռադիները տարբեր են հաղորդում. Թիգէս, Խուդուկ, Այնասուկէնէս (Ուխտանէս՝ շփոթելով երկու խօսքը), Առիգէս (Արդան):

Յակոբի քոյր Ասէրնէի անունը, որ մի քանի ձեռադիր եւս եւ Ուխտանէս եւ Վարդան՝ ըստ երեւութիւն շփոթ ընթերցմամբ, Ասէրնէն ունին (ԱՍԿԴՆ-ԱՍԿԴՆ), գուցէ Աստաւածաշնչի Ասմենէ (արիկինն) լինի՝ փոքր ինչ աղաւաղեալ ձեռվ, որ Զգօնի Հայերն թարգմանութեան մէջ Աշշինայ՝ բուն ստորական ձեւովն է պատահում:

Ոչ պահաս անստոյդ է թվում եւ Ասկդնէի որդին, որ գնալով Գթաց (երկու գրչագիր ունին Աակենաց^(*) երկիրը՝ թագաւորումէ այնա՛զ եւ յետոյ իրը թէ Տրդատի հետ մենամարտում Յու-

¹ Ա-հոդանէս, Ա. էջ 79:

² Այսպիսի ընթերցուած ունի նաեւ Խմբնի հրատակած Ա-որդնի Ուխտանցովի թագաւորունի օրինակը (էջ 54):

նաց երկրում։ Զենորի տպագիրները շունին այդ անձին անունը. բայց մի քանի ձեռադիր Հըտէն են կոչումնորան, որից ըստ երեւութիւն եւ առել են են Ուխտանէս՝ Վարդան եւ Գաշանց թուղթը:

Արդարեւ՝ Զենորի ի հաստատութիւն իւր պատմածին յիշումէ այն աղբեւը, որից նա քաղել է իւր տեղեկութիւնները Դորէ չ ի մասին. բայց մրցափ հաւատաի է այդ աղբեւը: Բարդա պատմագիրը, որի գրուածը՝ հեղինակի ասելով, պահչիմ էր Ուռհա քաղաքի դիւնաւում, պատահումէ ձեռագիրներուն Բարդէւն եւ Բարդէնան ձեւերով, որին Ուխտանէս Բարդընժան Ուռհայեցի է կոչում: Բարդայ կամ Բարդեան անունվ Ուռհայեցի պատմագիր անձանօթ է. իսկ Բարդէնան կամ Բարդըն անը՝ եթէ համանուն հռչակաւոր գնուատիկոր ընդունինք, որ ունէր արդարեւ գրուածներ՝ թէեւ ոչ Ճենաց մասին յատկապէս, ապա վերջինն ծագում էր Բ. գարու կիսում, ուրեմն եւ ոչ մի կերպ չէր կարող աւանդել Պ. գարու ապրող Լուսաւորչի եղայր Սուրբնի, Զուանշիր Հեփթաղի, Յակոբի քոյր Ասկդնէի եւ Նորա որդու մասին: — Բարդայ անլուր անունը՝ ըստ իս՝ նպատակով է գործածել այստեղ Զենորի իւր մատացածին պատմութեան ստուգութիւն տալու դիսմամբ:

§ 11. Այս յօդուածն եւս, ինչպէս արդէն ես Եշանակել եմ (ան վերը՝ համեմ.), ծաղկաբազ է արած Ագաթանդեղից եւ Խորենացու Բ. գրքի 82որդ գլուխց, որ կամ ինքը Զենոր չէ հասկացել, կամ զիսմամբ յեղաշրջել եւ կամ նորա պատմութեան ընթօրինակողներն են շփոթել: Այսուել՝ Զենորի բնագրում ասած է. “իրեւ տեղեկացաւ (Տրդատ) է Եւայ ուներոյն Գրիգորէն թէ գա է որդին Անակայ . . .” — Եթէ բառայի ընդունենք այս

¹ Ա-հոդանէս, Ա. էջ 80: — Ա-որդնի, էջ 54: — Ա-որդնի պատմութեան, Կ. Պոլիս, 1824, “Թուղթ սիրոյ եւ միարանութեան, . . . էջ 335:

Յովշաննու Աւետարանիցի մասին այս աւանդութիւնը միանգիտած անձանութեան է, ոչ միայն մեր հնագոյն պատմիջներին, այլ և բնդ հանրապէս եկեղեցական մատենազիններին։¹ Դորան գիտէ միայն Յայսմաւուրքը,² որ ըստ երեւութիւն Զենորից պէտք է առած լինի։

Բայց հեղինակը՝ այս անհաւաստի աւանդութիւնը վերասասուգելը աւելի գժուարացնելու դիմանմբ խճաղել է նորան բազմաթիւ յատուկ անուններով (առփառական եզանակ Զենորի), քաղելով դոցա մի մասը — խառն ու շփոթ կերպով — խորենացու Բ. Գրքի Ներդ դիմոց, որ ամեննեին վերաբերութիւն չունի այս նիւթին։ Պատմահայրը միշում է այսուղ Ուռագներէ աշակերտ Փեր Թէ՛ղանոննէ, որ եպիսկոպոս է Կեսարուեւ հեղինակի մի քանի պատմական գրուածների, դոցա թուումը և Եկեղեցու հալածանքի մասին Մաքոիմիանասի, Գիշոսի եւ Գիշոսի տեսանունի օրով։ — Փերմելիանոս անունը Զենորի գրուածում Փարմելուի է փոխած, որ ձեռագիրներում պատահում է նաև Պէրմելիանոն։³ Ճեւով. Ապրդանի մի գրչագիրը դորա փոխարէն ու նի Փերմ-Շանոս։⁴ Խակ Ա. Էջմիածնի Զենորի Երկու գրչագիրը՝ «Փերմելու» աշակերտ Որոգիանոսի, որ յետոյ սրբագրած պէտք է լինի համաձայն Խորենացուն — փոխանակ անլուր Ալբենոս անուան։ Խակ Այսին 14որդ յօդուածում Ա. Կարապետի

¹ Այս հասուածում Ա. Էջմիածնի Զենորի Երկու մեռագիրը ունին «. . . եւ ետ (Յովշաննեւ Աւետարանիւ) յՊողիկարպատ Զ. մոն այ հայ ը ապ ե ան», — որ արդարեւ եպիկարպատ էր Զ. մոն այ ը ապ ե ան, ու եւ նահասականեց ինչպէս վկայում է Եսուեկուն (Եկեղ. Պատմ. Հայ թարդ. Գլոր. Գ. գ. 15), բարորմին ասիցն ըստ յիշելով Ա. Կահանակի մասնակցութիւնը Յափշաննու Կարապետի մարմենի Եփեսս կամ այլուր փոխագրելու մասին։

² Հ. Ա. Չահանակ Պատմ. Հայոց, Ա. Էջ. 626։

ԽԵՆ. ՀԵՊ.

³ Ա. Ա. Չահանակ Պատմ. Հայոց, Ա. Էջ. 626։

⁴ Ա. Ա. Չահանակ Պատմ. Հայոց, Ա. Էջ. 626։

Կախարը հայ նախարարների ձեռքով՝ սպառնալիք քով եւ բանաթեամբ սուանալը Կեսարու Վեւոնդ հայրապէտոց, — կամ յետ ժամանակի ժողովրդական աւանդութիւն համարելու է եւ կամ համած զրոյց. յամենացն գեպս դա կրինութիւն է § 13ի վերջում միշածին՝ զարդարուած նորանոր անսույդ պարագաներով, որոց թուումն են նաև Վեւոնդի կազմից Լուսաւորչին տուած ինչ որ «Երիշ-լուսաւորչ» անուն, զոր էր տուեալ նմա (Վեւոնդի) Հոռմայ հայրապէտն։⁵ — Կոյն «լուսաւոր ականց» մասին միշում է եւ Վարդան (Էջ 57), թէեւ յայնի չէ, ինչ ակունք էին դոքա: Զենոր ուրիշ աեղ (Էջ 38) «ակն լուսայ» է կոչում դոցա եւ բացատրում «անոն լիւզրոն», որ թարգմանիչները աթմիստե են թարգմանում։

§ 16. Անյատ աղբեւրց քաղած այս հատուածը, ինչպէս սովոր է անել Զենոր, կուտակել է անձանութ յասուկ անուններով, որոնց գժուար է սուուցել: Ով էր այս Գիշուռիս (Երկու գրչագիր՝ Գիմառ ու իսկ ունին) Եպեքսանդրիսցից, Եպիշառը Ասորիից, Սո-որինուն՝ Եղեսսոսից: Ազաթանգեղ աւանդում է, որ «ի Աերաստիա գտաներ բազմութիւն եղարց, զորս հաւանակցուցաներ (Գրիգոր) ընդ իւր գալ, զի վիճակցուցէ զնոսս ի քահանացութիւն յիւրում աշխարհներ (Էջ 605), որ եւ կրինում է Զենոր բառացի: Ե. յանեղ ոչ կրօնաւորների անուններ կան եւ ոչ Եպեքսանդրիս կամ Ասորի, որոց խիսյն մէջ է բերում Զենոր: — Եղեշագարի մասին զեռ կր խօսենք. անցնինք այժմ Զենորի պատմութեան զլիսաւոր հաստածնին՝ այն է — Գիսանէ եւ Գիմետրէ կուռքերին եւ նոցա առթիւ տուած պատերազմներին (Էջ 25—35):

§§ 17—20. Ազաթանգեղ պատմում է, որ Տրդատի, հայ արքունեաց, նախարարների եւ բազմութիւ ժողովրդի մկրտելուց յետոց՝ Լուսաւորիչ առաջարկեց «վասն խաղաղութեան հասարակաց»

քակել, կործանել (զչեթանօսական մէջեանսն), բառնալ զգայթագութիւնսն ի միջց եւ ի բաց կորուսանել...» (Էջ 583): — Ազա ինքը թագաւորը զօրքով զնում է Արդարաց՝ այնտեղի Հնահտական բառինք կործանելու եւ ճանապարհին հանդիսելով Երաշոյն՝ նախ քանզում է Տիր դից մեջեանի եւ ապա Արտաշատու Հնահտականը: Այսուհետեւ Տրդատ եւ Գրիգոր շընում են Բարձր Հայոց կողմերը՝ նոյն նպատակով. Դարանազեաց Թորդան գիւղում քանզում են Բարձրինիսա ապիտակափառ դից մեջեանը, Անք ամրոցում՝ Արամազդինը, Եկեղեց գաւառի Երեխ աւանում՝¹ ի մեծ եւ ի բուն մեջեանայցն Հայոց թագաւորացը՝ — Հնահտականը, Թուաւանում՝ Կանէականը, Գերջան գաւառի Բարձր յառիք աւանում՝ Արամազդինը, Զարդում, Վշում ևն ասսուածների պատկերները եւ տիրելով գարերով ժողոված մեջեանների գանձերին՝ աղքատներին են բաշխում նոցա. իսկ հողային կալուածները նուիրում եկեղեցւոյն սպասաւորութեան: Եւ այս նոքա կատարում են տեղ տեղ, ի հարկ է, ոչ առանց քրմերի եւ հեթանոս ժողովրդի բուռն ընդդիմազրութեան, որոնց այլաբանօրէն «թեւաւոր դեւերին է նմաննեցնում Երկիւլած պատմիչը»:²

Յետ այսորիկ, երբ որ Լուսաւորիչ ուղարկուեց նախարարների ուղեկցութեամբ Կեսարիա՝ Վետոնդիոս արքեպիսկոպոսից ձեռնադրութիւն ստանաւու, իւր վերաբարձին «եկն եշտ ի սահմանս Հայոց, լոււաւ՝ թէ Վահեկան մեջեան մնացեալ է յերկրին Տարօնյ, մեջեանն մեծագանձ, իւ ոսկով եւ արծաթով, եւ բաղում նուերը մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ, ութերորդ պաշտօն հռչակեալ, անուանեալն վիշապաքալն Վահագնի. յաշտից տեղիք թագաւորայն Հայոց մեծաց, ի մնարս Երկինն Քարքեայ ի վերաց գետոյն

¹ Աբովյանին, էջ 583—593:

Եփրատայ, որ համերեպ հայի ի մեծ լեառն Տաւրոսի, որ եւ անուանեալ ըստ յաճախապաշտաման տեղեայն Յաշտիշատ. զի յայնժամ եւ գեռ շնորհին երեք բագինքն ի նմա: Առաջին մեջեանն Վահագլահեան, Երկրորդ Ռակեմօր Ոսկեծին դից եւ բագինն իսկ յայս անուանեալ՝ Ոսկեհամամօր դիցն. եւ Երրորդ մեջեանն անուանեալ Ասոլիկան դից, Անեեակ Վահագնի կարդացեալ ըստ յունականին, որ է ինքն Նփրոդիտես: Արդ գիմեաց գալ Ա. Գրիգորիս, զի քանդեսոյ եւ զայն. զի տակաւին իսկ ագէտ մարդկան խառնակութեան զոհէին ի յայս բագինն մնացեալու:¹

Այսուհետեւ շարունակում է պատմել Ագաթանգեղ թէ Լուսաւորիչ «Հրաման ետ զօրականին եւ իշխանացն որ ընդ իւրն էին, զի Ելքեն մրձակը տապալեսցեն զշնուածն բագնացն: Որ Ելքալ շատ ջանացան եւ ոչ կարացին զգուր բագնացն գտանել զի ի ներքս մոցեն, զի ծածկեցին դեւքն ի նուցանէն . . . : Իսկ (Գրիգոր) առնոյր զնանի տէրունական խաչն եւ ել եկաց ի ձորակին յանդիման բարձրաբերձ տեղուցն շինուածնցն եւ ասէ. Ճեշշակ քո, Տէր, հալածեսցէ զնոսա: Եւ ընդ բանին հողմ ուժգին բղնեաց ի խաչանիշ փայտէն . . . : Եւ Երթայր հողմն լցեալ լերինն հաւասար, եւ չողաւ հարթեաց, տապակեաց, ընկեց զամենացն շինուածն բացնացն . . . : Եւ կոսորեցան մարդկի պաշտաման քրմութեան որ ի տեղուջ անդ էին . . . : Եւ յետ այսորիկ Ելաններ նա (Գրիգոր) ի տեղի մեջենիցն, եւ ժողովեալ դարձուցաններ զմարդիկ աշխարհին յասսուածպաշտութիւն: Եւ եդ անդ զիմնունն եկեղեցւոյն . . . յանուն Ա. Երրորդութեան:²

Ես գիտմամբ մեջ բերի այս ընդարձակ հատուածները, որպէս զի ընթերցողը պարզ տեսնի՝

¹ Աբովյանին, էջ 606—607:

² Աբովյանին, 608—610:

թէ ի՞նչ նիւթ է ունեցել Զենոր իւր ձեռքի տակ
եւ ինչպես է նորան մշակել ու կերպարանախիսել:

Կարեւոր է զիսել, որ Աղամենու դի վիրոյ-
ութիւնը Աշտիշասում եղած Վանելանելուն կամ
Վանագին մասին հաստատվում է միւս
պատմազիրներից: — Այսպէս՝ Բիւզանդ:¹ Երկու
անդամ միշում է Աշտիշասում գտնուած Հերո-
վոյ իւր Վանագին մեջեանը եւ մի անդամ Ամոռ
Անահատոյ, «որ բառ երեւութին Աղամենու եղի
«Ասկեծին, Ասկիսոյը Անահատին» է:

Խորենացին նպանգէս յիշում է, թէ Տիգրան
Միջն Հրամայեաց յաշակց տեղիս (Աշտիշասու)
կանցնել Անդրբերոյ (Աստղիկան՝ ըստ Աղամենու-
գեղայ) պատկերն իրբեւ Երակուոյ բարեւուրի առ-
նորին պատկերին Երակղեայ . . .²

Անդրբագէս Անահատի մենամէն և նոր սովորոյ
դատիքէ մասին աւանդում են տոհմային պատմա-
գիրներից շատ վաղ նաեւ Ալինիս եւ Պլուտոնիոս:³

Մինչդ ես բացարձակ հակառակ այս արժանաւ-
հաւաստեղեկամթիւններին, նաեւ դիտանմէ յան-
դէս ձեւանալով ասցա մասին — Զենոր նկարա-
զրելով հոչակառ Աշտիշասու՝ բնաւ չէ յիշում
ոչ Վահագնին կամ Հերակլեն, ոչ Անահաբն եւ
ոչ Աստղիկան կամ Ավրոտիսին: Դորա փոխարէն նա
այսպիսի առասպել է պատմում: Աշտիշասում
կային Հանունք, որոց պաշտօնեանեըը — քուրմերը
«սեւք էին եւ դիսաւոր եւ զազուանեակը, զի ցե-
զով ի Հանունք էին: Քանզի եւ կացն, որ յայս
տեղով էին, պատման այն է.» — Երկու Եղայր՝
Գիսանէ եւ Գեմեար Հնդիկ իշխաններ՝ փախչելով
իրենց Դինարէ արքայից, պատման են գտնում

¹ Բառապահութ, Գ. 14, Էջ 37, 38, 12, 25:

² Խորենացի, Պատմ. Բ. 14:

³ Տես Die persische Anahita, ein Beitrag zur Mythengeschichte des Orients, von Windischmann München, 1856.

Հայաստան՝ մեր Վաղարշակի մօտ: Սա պարզ եւում է նոցա Տարօն գաւառը, ուր նորա քաղաքը են շի-
նում եւ կոչում Վիշապ: Տա անուն չինք տարի
անցնելուց յետոյ Վաղարշակը սպաննել է տալիս
(չէ յայտ ինչու) երկու եղայրներին, եւ իշխանու-
թիւնը յանձնում է նոցա երեք որդւոց — Կոստ-
ան, Մեռքունին եւ Հառեւանին: Աղցանից իւրա-
քանչիւր նախ իւր սպանմէր աւան շինելով (Կու-
տաս, Մեղսի, Հառեան), — այնուհետեւ «Հոռ-
վասուն» Քարքէ լերան վերայ ընդհանուր ոյժե-
ռով գասատկերտ են կանգնում, եւ այնտեղ
եւս երկու պղնձեայ կուռքեր են հաստատում
մէկը յանուն Գիս սանեն եայ եւ միւսը՝ յանուն
Գիմեար եայ, ու իրենց ազգին յանձնում նոցա
սպասաւորութիւնը: «Գիսան էս, աւելացնում է
Զենոր, զի գիսաւոր էր եւ վասն այնորիկ նորա
պաշտօնեայըն գէսք էին թողեալ, զոր Հրամայեաց
իշխանն (Ը) կորել: Զի ազգն այն յորժամ ի Քրիս-
տոս գարձան, չէին կատարեալ ի հաւասան եւ
զշայրենի օրենսն չիշեւէին յայտնի աւնել, այլ խո-
րեւութեամբ զայ Հանարեցան: Ճամ միան թողուլ
ի գլոււխ մանկանցն, զի զայն տեսեալ՝ միշեացեն
զպաշտօն պղծութեան իւրեանց¹:»

Սակայն որքան արժանահաւաստ է Զենորի
պատմածը: «Կախ՝ ճնդիսիսն գաղթականութեան
մասին Վաղարշակի օրով — ոչինչ յայտնի չէ. ոչ
ոք այդ մասին ոչինչ չէ յիշում: Ծառ հաւասական
է թժում ինձ ենթագրել, որ Զենոր՝ բիստու-
քրմերի եւ ծամուռը մանուկների զըսցը քաղել է
Բուզանդի հազարգած հետաքրքրական ազգային
սպարութիւն նկարագրից: — «ըստ մանկութեան
օրինի, բառ իրանից Հայոց, ասում է արժանահաւաս-
պատմազիրը, օրէն էր զգլուխ մանկաւոյն (գեր-
ծել), այնպէս ի ժամանակին (Պ. գարում) գեր-

¹ Զենոր, Էջ 36:

ծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ (Մամիկոնյ) եւ շշուն (ծամ) էր թողեալ եւ գեւ արձակեալ:¹ — Այս բնդհանուր ազգային սովորութիւնը մասնաւորել է Զենոր քրմական գասի վերաբերմանը, եւ բառ քաց բացատրութիւն տուել նորան՝ թերեւս մասամբ հիմն առնելով իրեն “ըստ իշխան Հայոց” ասացուածք, որ այնու ամենայնիւ ոչինչ հնդկականի հետք կամ ակնարկութիւն չունի:

Երիորդ՝ Գէւանէ եւ Գէւեռը հնդիկ անուններ չեն, ի գուր Աւգալէան, Lassen, Ritter — լաւազդյն հետազօտութեան արժանի ջանքերով — մերձեցնում են զոյս հնդկական Կրիսոյի եւ նորա եղայր Habadarի կամ Baleramի:² Առ նուազը՝ դոցանից մէկը հայ գեւ, զիսան (զիսաւոր) եւ միւսը՝ յոյն գեւեռը բառերի հետ կարող է ընրդութիւն ունենալ:

Երրորդ՝ Գէւանէ եւ Գէւեռը թէ իրբեւ անձանց եւ թէ կուռքերի կամ աստուածների անուններ՝ բոլորպին անձանօթ են Հայաստանի միւս զաւաւաներում, որպէս եւ բոլոր մեր պատմիչներին մինչեւ Ժ. դարը: Հետաքրքրական է զիսել, որ նոյն իսկ Ցովհան Մամիկոնեանը, — որ ոչ անհիմն հնդինակ է ենթադրվում Զենորի զրուածին, — ահազին քանակութեամբ իւր առաջ բերած յասուկ անունների մէջ բնաւ չէ յիշում Գիսանէին եւ Գէւեռին:

Չորրորդ՝ Հեթանոս Հայերի ամենահոչակաւոր եւ սիրելի ազգային սրբատեղում՝ Աշխատատում, Անահատի, Վահագնի եւ Աստղկան մեհեանում, ինչ գործ ունին Հնդիները իրենց աստուածներում Հայաստանում այդ միջոցին, որպէս եւ դրացի կապադովիիայում, Պոնտոսում նաև

¹ Բառաշնոր, Դիպ. Ե, գլ. 43:

² Տես Ritter's Erdkunde, X. Theil. III. Buch, West-Asien, p. 557: Կոյնպէս Էնդէ Օчеркъ религіи языч. арианъ, 1864. с. 41.

Վրաստանում, գարերով Հաստատուած եւ բոլորովին ազգային գարձած, Հայացած էր Խանական կամ Պարսկական պաշտամնները, որի գոյութիւնը յիշեալ երկրներում վկայում են միաբերան թէ առհմային եւ թէ օտար պատմիչները: Ա. յդ պարզ երեւում է նաև Հայ Պանթէռնի ներկայացուցիչ Արամազդի, Անահատի, Վահագնի անուններից, որոնք իսկապէս Զանդիկի կամ Աւեստական կրօնքի Ahuramazda, Anahita եւ Veretragna աստուածաներն են:

Վերջապէս Զենոր եւ ոչ մի խօսրով չէ յիշում, ինչ էր այդ կուռքերի պաշտամն և նըքը, ինչնո՞ւ էր նա ասրբերվում Հեթանոսական միւս հաւատպէներից. “պաշտօն պղծութեան” եւ այլ այսպիսի անորոշ խօսքեր բնաւ գաղափար չեն տալին Գիսանէ եւ Գէւեռը կուռքերի պաշտամնների մասին:

Թաղուում եմ կանգ առնել յադուակ անուններից բանագրոս ստուգարանութեան վերայ. գորա առանուած են բլուրների, լեռների, աւանների կոչումներից, — մի եղանակ, որ սկիզբն առնելով Պատմահօրից՝ ի չարն գործ գնելու չափ գործ է ածուած Զենորի որպէս եւ Ցովհ. Մամիկոնեանի գրուածքներում: Կոյնը գիտելու է եւ Բոռելի² զարմանակի որոշ եւ ձիշ նշանակելու մասին, որոնք իրենց արտակարգ ծառուղութեամբ արդէն ուղղիք են տալիս կասկածի:

Գալով մնացեալ յօդուածներին, Զենորի պատմութեան այդ մասը — §§ 17—28, էջ 25—49 — երեք հաստածի կարելի եր վերածել:

Ա. — §§ 17, 18, 19, 20 — քրմերի ընդուգնագրութիւնն է Առաւառորչին եւ նախարարներին, որ վերջանուում է նոցա պարտութեամբ, կուռքերի կործանուելով եւ յաղթութեան Ա. Խաչը կանգնելով Առաւառորչի ձեռքով (էջ 25—35): —

¹ Տես էջ 27, 29, 30, 36, 45:

² Տես էջ 28, 30, 35, 36, 37, 44, 45, 48—49:

Այս հասուածի վերաբերմամբ արդէն բաւական խօսեցանք վերը՝ Գիտանեի եւ Գեմեարի առթիւ:

Բ. — §§ 21, 22, 23, 24, 25 — Ա. Կարապետի նշանգրը Խնակնեան տեղում գնեցն է եւ այնաեղ եկեղեցի եւ քանչ շինելը, որ այնքան շահազրդիւ է Զենորի Համար՝ գուցե նոյն իսկ նորա Պատմութեան լցու տեսնելու գլխաւոր շարժառիթը լինելով (Եջ 35—40):

Գ. — §§ 26, 27 եւ 28 — պարունակում է ըստ Երեւութիւն պատահական, բայց՝ որպէս և առաջին հասուածը՝ պատմութեան գլխաւոր առարկայի հետ ներքեն կապով միացած — Տրդատի պատերազմների նկարագիրը հիւսիսային թագաւոր՝ Գրդափհանի հետ՝ Վըաց արքայի պատմառով — Գրիգորի եւ Տրդատի Հոռոմից վերադառնալիս (Եջ 40—49):

Ա. եւ Բ. հասուածները կազմել է հեղինակը ընդ հանրապէս Եղաթանգեղի ազգեցութեամբ, տեղ տեղ, ինչպէս ցոյց է տուած, կամայ-ակամաց կրկնելով պատմագրի խօսքերը, գաղձուածները նաեւ ամբողջ նախագասութիւնները, եւ մեծ մասամբ սորան անձանոթ անձեր եւ անուններ ներմուծելով՝ իւր նպաստի առաջ տանելու գիտմամբ։ Խնակնեան վանքի մասին աւելի մանրանան կը խօսինք սոսորեւ։

Իսկ Գ. ոչ պյլ ինչ եւ եթէ ոչ անհմուտ արուեստակութեամբ հնարած անհետագրբիր պարագաներ Հայոց եւ հիւսիսականաց պատերազմների, որոնց վերջը պասկվում է Տրդատի քաջութեամբ նոպանամբ Գրդափհանի հոկայի վերայ, — մուրացածոյ նկարագիր Խորենացու Պատմութենից, որ եւ ինքը Պատմահայրը, ըստ կարդին, փոխ է առել Յովկեպասից, ինչպէս արդէն վերը միշեցինք։

Առաջին եւ վերջն հասուածը իսկապէս բացարարութեան եւ յաւելուածի տեղ են ծառայում երկրորդ եւ գլխաւոր հասուածին։ Զենոր,

— որ այնքան հետաքրքրուած է խնակնեան վանքի շահերով, որին եւ ինքը վանահայր է եղած՝ իւր ասելով, — Լուսաւորչէ եւ Տրդատի հանդիսաւոր այցելութեամբ եւ արիւնահեղ պատերազմ ներով ձգտում է որբագործել այն տեղերը՝ Ա. Կարապետի Խեղեցին եւ քանչը ոչ միայն առաջին Հայոց որբարանը ներկայացնելով, այլ եւ այն վանքին ուսուերին մեժամբ բառապահութերու առանակելով՝ ապահովել ըստալով (ընդ ամենը աւելի քան 25 հաշուր ծուխ կամ երգահամար) իբրեւ նոյն իսկ Լուսաւորչից եւ Տրդատի հաստատուած։

Ահաւասիկ Զենորի Պատմութեան գլխաւոր շարժառիթը եւ նպաստակը, որ՝ պէտք է ասած, անսովոր չէ ոչ միայն մեր, պյլ եւ ընդ հանուը եկեղեցական միջնադարեան վանքային գրականութեան։ այն է՝ վանքապատկան կայուածները որեւէ է ձեռնձգութենից ապահովելու եւ կամ՝ ընդհակառակը, նոյց սահմանները աւելի ընդարձակելու դիմանմբ։ Հնագոյն նշանաւոր անձնաւորութիւնների — սուրբերի, թագ աւորների — հեղինակութիւններին դիմել եւ նոյց վերագրել վանքերի վաւերաթղթերի հաստատումը։³ Զենորի պատմութիւնը մի այսպիսի վաւերաթղթ է՝ կազմուած ոչ վաղ քան Է. դարում, Ա. Կարապետի վանքի կայուածների տիրապետութիւնը ապահովելու յանուն Լուսաւորչի եւ Տրդատի։ — Լոկ վաւերա-

¹ Այս 12 առաջիւղերից միայն 6ում Զենոր հաշվում է մօն 10.000 հեծեալ եւ հետեւակ զըզը։ (Զենոր, Եջ 37):

² Տես Wattenbach, Deutschlands Geschichtsquellen im Mittelalter, Berlin, 1893,

³ Եղանակ՝ յետ ժամանակի՝ գուցէ նմանութեամբ Հներին ընած վաւերաթղթերից է, իմ կարծիքով, եւ Հ. Սուրբիւրչների՝ Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայոց, գրում մեջ բերած Առաքելոց, կամ “Գլաձորոց”, վանքի յիշաւակարանը, որ ուղակի Լուսաւորչին մերաբուժ վաւերապատկան յանին ժամանակի սահմանների ամենամեծքանակ պըղութենիր։ (Տես Եջ 234—235)

Սան. Հեղ.

թուղթը՝ աւանների եւ գաստակերտերի միակերպ
անուններով եւ ծախերի ու հեծեալ ու հետեւակ
զօրքի ցամար թուերով ոչ հետաքրքրո թիւն կա-
ռող էր ունենալ եւ ոչ եւս մեծ հաւատ գրաւել
ընթերցողների կողմից: Պէտք էր ուրեմն այդ բան
գործնական, նիւթական նպաստակը պատկել կրօնա-
կան-պատմական պարագաներով եւ նորան սրբա-
գործ եւ նույիքական անձինքների միշտակալ: Այս
բաւական չէ: Ազաթանգեղին՝ հայ Պատմութեան
այդ երախայրիքի մեջ չկար վկայութիւն ոչ իննակ-
նեան վանդի գոյութեան մասին եւ ոչ Լուսաւորչից
հաստատուած նորա կալուածատիրութեան՝ այն
չափավ, որ չափավ որ կամենում էին այդ՝ վանքի
յետ ժամանակի (Ե-Թ. դարու) միաբաները:
Պէտք էր ուրեմն, որ Զենոնի գրուածը թէ նախա-
ռաջի Ազաթանգեղին եւ թէ հետեւաբար կարե-
րցն չափ անենան լիներ նորա պատմութեան:

Ահա ինչու Զենոնի պատմութիւնը եւ ան-
վաւեր է եւ կեղծ:

Պատճեր Զորից թղթոց եւ

Պատախաճի Չենորից ցողանել զպատճառ
Պատճեն/թեամ:

Ցց տալով Զենոնի վերաբերած բուն պատ-
մութեան անհաւասի եւ նպաստակառը լինելը,
գժուար չէ այժմ՝ ապացուցանել եւ այն չորս
թշմէրէ եւ հեղինակի Առաջանքանք անսատուգութիւնը
(Եջ 1—19): — Անցնիք այժմ գոյա հետազոտու-
թեան:

Ա. Թօնող. (Եջ 7—9:) Այս թուղթը գրել
է տալիս Զենոն Լուսաւորչին՝ իբր թէ իւր վիճակի
պէտքերի համար երկու կրօնաւոր (Եղիազար եւ
Տիմոթէոս) խնդրելու կեսարու Դեռնդիսա հայրա-
պէտից. բայց իսկապէս դա նպաստակ ունի իննախնեան:

Դեռ (վանքը) եւ նոյն իսկ Լուսաւորչի բերանով
սառագելու եւ վաւերացնելու Գիսանէ եւ Դեմետր
կուռքերի զոյլը, որ հեղինակի համար կարեւոր է
— Ազաթանգեղից տարբեր լինելու նկատմամբ:

Բ. Թօնող. (Եջ 9—12): Այս՝ Վեւոնդիս
հայրապէտի Լուսաւորչին գրած պատասխանն է,
որ մի քանի տող ընդ հանուր խորհրդածութիւն-
ներից յետոյ նոյնական կենդրուանում է «Իննախնեան
ուղղական» — վանքի, միաբանաթեան, վանքային
կալուածների վերայ: Բայց ի գորանից կեսարու հայ-
րապէտը խնդրում է՝ գրով տեղեկացնել իրեն.
«Եթէ զի՞նչ էր պատերազմն ձեր եւ քրմացն (որ
յիննախնեան տեղոջն), մինչ երթայիքն ի մէնջ...»
ևսկ Լուսաւորչի խնդրան երկու կրօնաւորներին նա
չէ ուղարկում՝ սոյա Կեսարիայից բացակայութեան
պատճառով: «Եղիազար, աւելացնում է Պետոն-
գիսսի թուղթը, գնաց ի քաղաքէ իւրմէ փախա-
տական, զի յարեան ի վերայ հերեսիսվասպէն (»)
եւ հալածեցն զնա ի կողմանս Հռոմաց. իսկ զիթ-
մոթէսա լուսոյ թէ զնաց ի կողմանս Երուասիլի-
վասն Առաջապահներ բարձրանելոց նելլինցից քիր (ՏԸ!):»:

Գ. Թօնող. (Եջ 12—13): Այս ժամանակ
իրեն Գրիգորի, Հայոց թագաւոր Տրդատի եւ չորս
գահէրէց իշխանների ստորագրութեամբ ուղարկ-
վում է թուղթ՝ «Խիստացոց Եպիսկոպոս Եղիազարին՝
խնդրանոք փաթալ գալ Հայոց երկիրը եւ բնակիլ
որ կամենան՝ Եկեղեցաց թէ Հարք գաւառը: —
Այս թղթումն եւս մուսցուած չէ իննախնեան ուղղա-
պէտից ասում է. «Թէպէտ գու իսկ (երեւի՝
Եղիազարին է զիմում) ասէիր, եթէ զիննակն եան
տեղիսն առն ինձ. եւ անդ զըս Եղիազար (զԶենոն)
իսկ իմ ձեռնագրեալ Եպիսկոպոս . . . այլ մեզ
ոչ է արժան առնուլ ի նմաննե, զի աշխատեալ է
առանց այլոց սատարութեան:»

Այս թղթուղթը երկար ճանապարհորդում

է՝ մինչեւ ըստ պատկանելոյն հասնիլը։ Թղթաւասարները գնում են Առաջաւեւ Կեսարիա, այնտեղից Երուսաղեմ, ուր տեղեկանում են, որ Եղաղաք եւ Տիմոֆէտա Հռոմ են զնացել։ “Եւ իբրեւ նոքա ի Հռոմ զնացին, Եղեղաղաք ի Միջազնու Ըստրոց էր զնացեալ վաս բարձրանուեան ժ.Բ. Տուքարէցն” (sic!)։ Իսկ Բեկսոր, Անաստաս եւ Գայիս Եգիպտասի Եպիսկոպոսի իրեւեւ տեսին զմուղմն, յյժուրախ Եղեն եւ խնդացին։ Քսնղի նոքա հալածական շրջենի զինի^(*) Եղեղաղաքու։ — Արքա փութով նամակ են դրում նյյն Խօսպէրով Տիմոֆէտասին, որ Կորնմու էր, եւ իրենք զնում են Միջազնու Եղեղաղաքին գտնելու։ Եղեղաղաքին այստեղ չպատահէրվ՝ վերագտնում են Երուսաղէմ, ուր նոցանից մէկը՝ Գայիս, տեղւոյն հայրագետի մահուան պատճառով Երուսաղէմի հայրագետ է բնարփամ։ “Իսկ Եղեղաղաք եկեալ, ի ճանապարհին հանդիպեցաւ Ա. Գրիգորի եւ Տրդատոյ եւ իրնդացեալ յյժուրձաւ զինի նոցա մինչեւ ի Հռոմ քաղաք։ Եւ անդ կացեալ բազում առողջ, առա խնդրեաց^(*) ի Նշեաբաց Ա. Առաջեւլցն ճան ինչ, առնեան յեւ Անորէկ առաջեւլցն եւ Պատուան առաջանան։” (էջ 14.) Առնելով իրենց հետ այս բոլոր՝ մեծաւ խնդամբեակ գտնում են իրենց աշխարհը, եւ Տրդատ անցնում գնում է “Այրարատեան քաղաքը”, — “Իսկ Ա. Գրիգոր մնաց ժամանակ ինչ ի Տարօն՝ ընդ իւր առնելով զնչխարս Ա. Առաջեւլցն, գտարեալ աւուրս քսան եւ հինգ է ժան Գլուխ (sic!). յիննակնեան տեղին Գիսանեայ կոսցն, ի Կայեան նշանաց Ա. Կարապետին Ա. յասեղ Ա. Գրիգոր՝ մնելով եկեղեցին, տարածում է իւր ձեռքերը Ա. Առաքելց նշխարների առաջում առաջ առ ամփոփելու դոցաւ Աղօթքից յետոյ երեւում է հրեշտակը եւ ասում, որ պատշաճաւոր տեղ ցոյց այս ամփոփելու դոցաւ Աղօթքից յետոյ երեւում է հրեշտակը եւ ասում, որ նա պայ Տաւրոս Երբան ստորոտը, “ուր եւ համե-

յաւ Տէր բնակիլ որբոցդ : Ա. յասեղ Լուսաւորիչ շնուռմ է Վայուան եւ ամփափում Ա. Առաքելց նշխարները։ — Եւ կարգեալ անդ զպաշտօնեալու եկեղեցեցն արս երկոսասան եւ ետ զտեղին զայն Եղեղաղաքու եւ անուանեցին զնա Եղեղաղաքու Ա. ան+ :” (էջ 16+)

Այդ միջոցները վերոյիշեալ Քեկտորին եւ Անաստասին Բիւզանդիանում Տարօնի Եշտիշատից զնացած մի քանի անձինք “տույին զոյց զառաջին պատերազմէն” մինչ զայր Ա. Գրիգոր ի Տարօն, եւ թէ զեարգ գարձան նոցա ընդգէմ քուրին՝ որ ի տեղին Գիսանեայ: “Կոյնակէս եւ վերկորդ պատերազմին, որ Եղեւ ընդ Տրդատ եւ ընդ իշխանն Հիւսիսայ:” — Ա. յասեղով՝ Բեկսոր, Անաստաս եւ Աքիւզաս եւ Մարկեղիսս կրօնաւորները շատ զարմացան եւ զրեցին թուղթ Ա. Գրիգորին:

Դ. Թաս-Ա. (էջ 16—17.) Յիշեալ կրօնաւորները հազրորդում են Լուսաւորչին, որ նորաթուղթը (անշուշտ այն) որ նա ուղղել էր Եղեղաղաքին իրենք Հռոմ քաղաքում, բայց չկարողացան դալ Հայոց Երկիր Եղեղաղաքի պատճառով, որ շրջում էր Միջազնու քուրմ, եւ ապա Երուսաղէմ գործ ունենալով զնացին այնակը։ Այժմ իրենք Բիւզանդիս են գտնվում, իսկ Տիմոֆէտուր Եղեղաղաք, որին սպասելով, շարունակում են մնալ Բիւզանդիս։ “Այդ մեք վասն այդր գանդաղիմք գալ (ի Հայս), աւելացնում են կրօնաւորները, զի երկիրդ հեռի է եւ մեք անկար ի նուազ կենացս եւ ի պանդիստթէնէ Ա. յասեղ եւս, որպէս եւ նախորնից այց երեք թուղթերում, առաջ է գալիս գարձեալ իննուն վենց։” բայց արդ աղաջեմ զըեղ, աւարտում են իրենց թուղթը կրօնաւորները, Երջանիկ մշակդ Աստուծոյ, զի հրամայեացես միում ի պաշտօնէիցդ քոյց մեզ գրով առաքել զպաշտարութիւն ձերում ճանապարհորդութեան եւ զդալն յերկիրդ Հայոց

եւ շառաջն պատերազմ որ է որ այս անոք, եւ զերկ կրսրդ գալի ի Հռոմայ եւ զայն պատերազմն՝ որ ի հիւսիսականաց անոտի եւ ընչերացն զբ առըւթել են, ենիւ այս եղեալ եւ իստ զբ պաշտօնեացն բնովել են առ նու . . . եւ զԱրտնիդէս եւ զԱնտոն մըր ես թողեալ . . . եւ կամ զի՞նչ եղեւ Եպիփան աշակերտ նոցա, եւ կամ մըր Եպիփանը եւ Զի՞նոք: Զայս ամենայն ստուգիւ զրեաջիր առ մեզ աղաւեմք, զի յերթալին մեր առ Տիմոթէոս Եպիփանապա՛ մարթասացուք առ զեկացուցանել զնսաս գրով:¹

Այս միեւնայն ինդիրն է, որով զիմնել էր Ա. Գրիգորին Պետոնդիս Հայրապետը (Բ. Թուոլթ) եւ որը իսկապէս ծրագիր է Զենոբի պատմութեան:

Պատմութեանի Զի՞նոքոյ ցո՞սանել շուտուժառ Պատմութեան: (Էջ 19:) Զենոբ Հազորդում է Աստրի Եպիփանականերին, թէ Ա. Գրիգոր Հրամայեց իրեն զրել իրենց ինպարծ Հարցերի մասին: “Եւ դոք, դառնում է նոցա Զենոբ, մի ինչ աղարտեք զակաւ պատմութիւնս կամ եթէ Աստիճանին զայդ ոչ ձիչ: ոչ ես յառաջնորդ չըրեցի ունի զն: եւ որ զթագաւորաց ժամանակն չզրեցի, վասն զի Ա. Գրիգոր ոչ Հրամայեաց ոչ այլ ինչ աւելի զրել քան զհայցուածն ձեր. մանաւանդ պատշաճ Համարեցաւ զարշակունի եւ զքուջ Բաքուսորոց էլլը Ռազուլ ունի Հայոց եւ ձեզ պատմէն պատասխանոց զրել, զրի ինքն անսանեաց Ա. Գրիգոր զայս պատմէն՝ Ասորոց Պատմութեան: ²

Թողմերում Հազորդած շատ Հանգամնիքների անսեզութիւնը ակներեւ լինելով՝ ես կանգ կ'առնեմ միայն մի քանի եւ գլխաւոր ինդիրների վերայ, որոյ պարզելը անհրաժեշտ է:

1. Իննակնեան կամ Գլամիայ վանքը, որի հետ սերտ կապւած է նաև Զենոբ Գլամիի ինդիրը:

2. Լուսաւորչի ձեռքով Հռոմից Անդրէի եւ Պուկասու առաքելոց նշխարները Հայստան

բերելը եւ Եղիազարու վանք հիմնելը: ՈՎ Եր Եղիազար եւ իւր ընկերը Տիմոթէոս:

Յ. Մի շարք Ասորի կրօնաւորներ եւ նոցա անցագ ցանկութիւնը Հայստանում կատարուած անցքերի մասին մանրամասն տեղեկութիւն ունենալու:

4. Արքան սույզ է Զենոբի Աստիճանը:

1. Կախապէս զիտելու է, որ Տարօնի Աշտիշառում³ Դ. գարում, գեռ Լուսաւորչի օրով, ոչ պակաս քան Երկու քրիստոնէական որբավայրեր կային բիւզանդի ասելով, որ Հաստատվում է միւս մատենագիրներից եւս, — գոքա էին. — Ա. Մէջ առաջն նոյն էկեղեցեացն Հայոց, որ էր յերեկին Տարօնու, ուր նշանոքն եղելքը կործանեցան բազինք մէ հենիցն յայնժամ վաղ եւս առ մեծաւն Քահանապետան Գրիգորի⁴ կամ — “մէծ եւ նախառաջն էկեղեցին ի մայր էկեղեցեացն ամենայն Հայստանուեաց (ի Տարօն): — ”⁵

Այս նոյն էկեղեցին է, որի գոյութիւնը Հաստատվում է Աստիճանիւն՝ “Ա. Երրորդութիւն, անուանելով նորան:” Եւ եղ (Գրիգոր) անդ (է առնիք մէննէնցն որ յԱշտիշառ Տարօնոյ) զիմնենս էկեղեցւոյն, եւ աղղեաց սեզան փառաց Քրիստոսի: Զի նուի անդ արար սիրիքն շնելոյ էկեղեցեաց եւ ուղել սեզան յանուն Ա. Երրորդութեան եւ կազմել աւազան մլրասնթեան: ”⁶

Բ. “Նոյնակս ի ներբոյ քան զնա” (զառաջին էկեղեցին ի մայր էկեղեցեացն ամենայն Հայառտանաւաց) — շարունակում է անմիջապէս Բուզանդ, ուրեմն ոչ հեռի նորանից էր — “Բաքուսորունուն Յովաննուն,” որ ուրիշ տեղ նոյն պատմիքը “մէծ մարդարեարան Յովունուն” Յովաննուն⁷ է անուա-

¹ Բաքուսորուն, Էջ 7 (առգ. Ա. Ինեսիկի, 1832):

² Անդ. Էջ 36 (նոյնակս Էջ 42, 48, 74, 114):

³ Աստիճանիւն, Էջ 610:

⁴ Բաքուսորուն, Էջ 6:

⁵ Անդ. Էջ 7:

նում, “մեծ մարգարեանոց Յովշաննու, որ նախ շնչեալ տառն աղօթից եւ խնդրուածոց ի հանգիստ սրբոցն, „¹ եւ կամ — “Քայորուն որբոց վիպացից” (Յովշաննու եւ Աթանազինեայ): ²

Ագաթանգեղ դարձեալ հաստատում է բուշ զանդի աւանդածը. “Նա պատմում է, որ Վուսառուրիչ Յունաց Երկրից (Կեսարիայից) վերադառնալիս՝ բերեց իւր հետ նշխարժեր մեծի մարգարեին երաշնեալ Մկրտչին Յովշաննու եւ զուուրբ վիպացի քիրա տոսի վլթանագինեան:” ³ — Երբ որ եկան Տարօն եւ հասան Աշտիասի մեհեանների հանգեպ՝ Եւ վիրատի մօտ, — Գրիգոր կամենում էր կործանել բաղինները եւ “Հնեւ զիւայ ուրուն նոյս” (Աշխարաց): ⁴ ⁵ — Այս տեղ՝ մի ձորակի մէջ հրեշտակի ցուցմանք՝ Լուսաւորիչ զօքի օգնութեամբ “շնեցին զիւայ ուրուն եւ զուուրբան ի հանգիստ փոխեցին:” ⁶ — Այսաւեղ մասց Գրիգոր 20 օր “եւ կանգնեաց սեղան ի Քայորուն սրբոցն հանգստին, զոր շնեցին . . .”: ⁷

Խորենացին եւս ճայնակից է Տարօնի Ա. Յովշաննու “Ակայորունի” մասին: ⁸

Այս՝ ինչպէս Երեւում է, լոկ վիպացան կամ մասուս էր, յամենայն դէպո միայն եկեղեցի. Հանուն մասին գեռ չկայ ոչինչ ակնարկութիւն: Այս երկուսից զամո՞ Բուզանդ միշում է եւ երրորդը, որ գուցէ Լուսաւորչից յետոյ լինի շնուռած: — . . . Կեցնապէս մաս ի տուն Տեսան, շարունակում է Բուզանդի իւր նեկարազըսթիւնը վերացրեւալ հաստածում: — Եր “Հանգիստ առաքելցին:” — որ ուրիշ տեղ նաեւ “Առաքելարանիը Տեսան աշակերտացն:” ⁹

¹ Անդ. էջ 44:

² Անդ. էջ 114:

³ Ագաթանգեղ, էջ 607:

⁴ Անդ. էջ 608:

⁵ Անդ. էջ 610:

⁶ Խորենաց պատմ. Հայոց, գ. 2:

⁷ Բառաշանդ. էջ 36:

⁸ Անդ. էջ 7:

է անուանում, որից եւ պարզ երեւում է, որ առ բոլորովին տարբեր էր նախինմեաց “Մարգարեարան” մատուացից: ¹

Այս մասին ցաւակցաբար ոչ Ագաթանգեղ եւ նշ խորենացի ոչինչ չեն միշում. եւ թէպէս Բուզանդի հաղորդածը միանգամանցն ստոյդ է թշվամ ինձ, բայց գծուար է բացատրել, ինչն Հանգիստ Առաքելցոց, եր կոչվում այդ սրբավայրը, յատկապէս որ առաքեալների Հանգիստ էր այդ եւ որի ձևով հիմնուած:

Արդ՝ թնչ աեղեկութիւն ունի Զենոբ այս սրբավայրերի մասին: “Կամ՝ “մեծ եւ առաջն կամ մայր եկեղեցեացն Հայոց,” Ա. Երրորդութեան տառարք բոլորովին անծանօթ է նորմն, որ անկարելի է թպալ տալ, եթէ հեղինակը՝ արդարեւ Լուսաւորչի օգնականներից լիներ եւ Տարօն գաւառի ժամանակից պատմագիր:

Ցետ այնորիկի՝ “մեծ մարգարեարան Հապուսն” կամ “վիպայրան Ա. Յովշաննու”, որ՝ ինչպէս տեսանցք, էլեղուզ էր միայն, — Զենոբի զրուածում “Իննակնեան կամ Գլակոց Հանուն է փոխուած, որի գոյութիւնը, որպէս եւ կաշումները հաւասարապէս” անծանօթ են թէ Ագաթանգեղին, թէ Բուզանդին եւ թէ Խորենացուն, մանաւանդ. թէ Հակառակ են նոյս միաբան վիպայութեան: Ուստի՝ իմ կարծիքով՝ այդ կոչումները յետ ժամանակի լինելու են. վերջնո՞ւ Պատմ. է վերագրում՝ իբրեւ մականուն (աւել անուն), որին Լուսաւորիչ իբր թէ ի միջի սցլոց հետոք բերած էր Կեսարիայից, սակայն որի գոյութիւնը, որպէս եւ իւր անունով պատմութիւնը անյայտ էր մեր արժանահաւաս պատմիչներին — մինչեւ Ճ-Ճ. գարերը: Հեղինակը, որ անշուշտ նոյն Գլակոց վանդի արեգաններից էր, անպատճառ կամեցել է, որ վանդի հիմնագիրը ինքը Լուսաւորիչը լիներ, իսկ իրենց նախորդը՝ առաջն

զանահայրը — Լուսաւորչին ժամանակակից եւ նուրա մերձաւոր օգնականը, նաեւ պատմագիր Խնճակշնեան տեղայն։ Սակայն վանքը, որ անսովոր անունով Գլամէ էր կոչվում արգէն, հեղինակի կարծիքով՝ իւր կոչումը անպատճառ իւր հիմնադրից պետք է սասացած լինէր. պէտք էր ուրեմն աւելի գործածական Ասորի կամ Յոյն անուն առաջին վանահօրը, իսկ Գլամէ կը նորան մականուն կամ աւել անուն շինել եւ աշա Զենք անունն վերայ է ընկում հեղինակի ընտրութիւնը՝ գուցէ Նիկիյ ժողովի Ասորի հայրապետների ցուցակից հանուած¹, որից առնուած են թվում ինձ բաց ի գորանից, մեր հեղինակի գրուածում յիշուած եւս չըրս կրօնաւորների անունները. այն է Աւելուս (քրոքիսկուպան Խասրացւոց ի Կիլիյ ժողովին), Բէտուս (եպիսկոպոս ի Հայոց քաղաքէ), Գայէս (եպիսկոպոս Աղքասանգրիայ), Տիգրենս (ի Արքասրունէ Գամբաց)։ Զենքին անունով յայտնի էր նաեւ Ա. Եփրեմի աշխերաններից մէկը։

Վերջապէս Բուզանդի միշած «Առաքելարանք» կամ «Հանդիսա առաքելոց», որ հետու չէր «Մարգարէարան մասուուից», — Զենորի գրուածում դարձելաւ վանսէ է զանուած, որ իր թէ ինքը Խասաւորիչ հիմնեց, ուր եւ ամփոփեց, Զենորի ասելով, Հասմից իւր հետ բերած Անդրէ առաքեալի եւ Պուտոս աւետարանչի նշխարները՝ յանձնելով վանահայրութիւնը Զենորի եղքոր Եռդուշուն։ սրբանուով եւ վանքը իւչուեց «Եռդուշուն»։ սրբանուով եւ վանքը իւչուեց «Եռդուշուն»։

2. Լուսաւորչի ձեռքով Հռոմից Անդրէի եւ Պուեկասու առաքելոց նշխարները Հայաստան բերելու մասին, որքան ինձ յայտնի է, Զենորի պատմութիւնն է առաջին յիշողը, եւ այն՝ տարրեր

¹ Կանահանդէբի, կանոնիք Կեկիաց մեծ ժողովը (Հետապնդէբի)։

մանրամամառութ իւններով։ Անհակեան ապագիրը ունի այնպիս, ինչպէս զրուած է վերը. մի քանի ձեռագիր (ԺԳ. Եւ ԺԵ. Պարու), որպէս եւ Աւատանէս¹ ունին «... եւ ինզրեալ Ա. Գրիգորի (ի Ա. Հայրապետէն Հռոմից) մասն ի նշխարաց Ա. Առաքելոց Պէտրոսի եւ Պէտրոսի ... եւ զահեակ ձեռն Անդրէի առաքելոցին։ Պուեկաս Աւետարանչի մասին ուրա լուսում են։

Զկամիմ այս առթիւ երկար քննագատութեան մէջ մօնել, այսքան միայն կը նկատեմ, որ այսպիսի մի կարեւոր եւ առաջնակարգ իրողութիւն հայ Նեկղեցւոց կեանքում, ինչպէս է Առաքելոց նշխարների Հայրապետն առջափիխումը, անհարելի է որ աչքից փախցնէն Ագաթանզեղ կամ Խուրենացի, մանաւանդ առաջինը, որ բաւական մանր նկարագրում է Տրդատի եւ Լուսաւորչի Հռոմ գնալն ու վերագարձը եւ այնտեղից բերած պարզեները. — «Բերէին զպարզ եւս բերեալս անդրուտին, զոտին եւ զարծաթին եւ զպատուական կարսանին նաեւ զոտի սպաս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն զնէին»² — Ինձ թվում է, թէ առաքելոց նշխարների աւանդութեան առաջնական կարող էր տեղիք տուած լինել՝ ի միջի պյոց, նաեւ Բուզանդի «Առաքելարանք» կամ «Հանդիսա Առաքելոց», միշատակութիւնը, որ հետպէտէ մշակուելով, թէ երեւու ոչ առանց ազգային աւանդութիւնների ազգեցութեան, սկզբում՝ գուցէ Զենորի զըչէ տակ, Անդրէի եւ Պուտոս նշխարներովն է սահմանափակուել եւ վերջը ուրիշներից ճու-

¹ Աւետանէս, Ա. Եջ 108: — Յար եւ նման Աւետանէսին աւնի եւ «Պատանց թուզօթը», (ապ. Պոիս, 1824, էջ 345): — Աւետան (էջ 57) միայն «Եւսաւոր ակունս», և յիշում, «զոր էր «առեւու նման (Պէտրոսի) Հայրապետն Հռոմացի, իսկ առաքելոց նշխարների մասին» երեւի խորենացու ազգեցութեամբ, լուսում է: — Աբովնոս (էջ 7, ապ. Մասկուու) մասրոշ է յիշում, «մասն ինչ ի նշխարաց առաքելոցն եւ զահեակ ձեռն Անդրէի առաքեցւու»;

² Անդրէինէն, էջ 649—656.

իսցուել պէտքառի եւ Պէղովի մասունկըներովն եւու:
— Երգէն Հւուն սաեւզ յիշատակութիւնը¹, ի դէպ
թէ անգէպ, Զենորի Պատմութեան մէջ եւ յաս-
կապէս Պօղոս եւ Պետրոս առաքեալների Նշարնե-
րի Հայաստան բերելու աւանդութիւնը, որպէս եւ
Առաջաւ ու ուրաց պահոց Հու ու մայ Անգրեսորս
Հայրապետից բնդունուին ու Հաստատուիլը, իմ
կարծիքով՝ յեւ ժամանակի (Թ-Փ. գարու) ազ-
դեցութեան նշան համարելու է:

Գալով Եղիշչը անուան եւ անձնաւորու-
թեան, գտ նոյն եւ մի ծագումն եւ վիճակին ունի
ինչպէս եւ Զենոր. ի զուր չե նոցա Հարապատու-
թիւնը: Սակայն Եղիազար Հասարակ կրօնաւոր չէ.
Նորան աշխարհից աշխարհ որոնում են, մարդիկ են
ուղարկում նորա Հետոքից երուսաղէմ, Հռոմ, Ե-
ղիպոսոս: Անչչդեռ իւր Զենոր եղբացըր մերձաւոր
օգնական էր Լուսաւորչեն եւս եւ Հեղինակ՝ Ասո-
րոց պատմութեան, Եղիազար՝ Զենորի սաելով,
“Գնացեալ էր ի Միջագեաս Ասորոց Հառն Շաքի Հա-
նութեան Երիտրուան Տորիութեց”, — որ՝ ի հարկէ՝
գժուար է թոյլ ասու, քանի որ Ասուածաշնչի
սասրական թարգմանութիւնը (Եթէ գորա վերայ
է ակնարկում Հեղինակը) Դ. գարուց վաղ կասա-
րուած էր արդէն. մանաւանդ որ այսպիսի մի
հաշակաւոր գործի եւ թարգմանիչ կրօնաւորի մա-
սին զլանում են որ եւ է տեղեկութիւնն առլու ե-
կեղեցական պատմագիրները: — Եւ ինչով է վեր-
ջանում Տրդատի եւ Լուսաւորչի անդադար խոյզ
ու ինպիրը եւ անյազ փափագը Եղիազարին Հայա-
տան իշշելու. Նա վանահայր է նշանակվում մի
վանքից՝ իւր գործունեւութիւնը բոլորսվին անյազտ
մալով տու հմային պատմութեան:

Ինչպէս ասացի, Զենոր եւ Եղիազար վիճա-
կակից են. Գլակայ վանքի մօտ կար ի հնուց Պա-

զարու կամ Եղիազարու վանք, որին ժամանակա-
կից էր Զենորի պատմութեան Հեղինակը: Արդ՝ ու-
սովհետեւ Գլակայ վանքը՝ ըստ հայեցազութեան
Հեղինակին, իւր կոշումը ստացել էր իւր առաջնու-
թանահայրը Զենորի աւել-անունից, պէտք է որ Ե-
ղիազարու վանքն եւս իւր առաջնութեանահայրը ու-
նենար Եղիշչը անունով, նոյնպէս ժամանակակից
Լուսաւորչի նոյնական Ասորի: Եւ ինչու նա անզամ-
նոյն Զենորին Եղիազոր եւս չլինի, քանի որ գոյա
երկասի վանքերն եւս այնքան մերձաւոր դրացիու-
թիւն ունին:

Այսպիսի տրամաբանութեան շնորհիւ՝ ըստ
իս կարող էր առաջնանալ Եղիազար անձնաւորու-
թիւնը՝ զաւորնթաց Զենոր սասուան: Խակ Եղի-
շչը որպէս եւ Գլակայ վանքի հիմնարկութիւնը
անշուշտ Պ. գարից բաւական յետոց գնելու է:

Յ. Արքաբերութեամբ մնացեալ կրօնաւոր-
ների, որոնց յիշում է Զենոր իւր Պատմութեան
մէջ, — գժուար է գոյա մասին որոշ ինչ ասել. ո՞ւը
էին այդ Արքինոս, Անապատ, Առեւոս (Ա. կ ա կ ի ՞ս ա
արդեօք կամ Ա. կ ե ս ի ո ս, ժամանակակից Պար-
սից Շապուհ արքայի, որ պատահում է Ասկրասի
Եկեղ. պատմ. մէջ — Ա. 10), Գլակին (արդեօք
Պ. զ. ք. ի ա ՞ս ս Եւսեբիսոսի Եկեղ. պատմ. — Ե.
12), Մարիկոս, Մենոնուքոս աղանդաւոր, Պիտոն
թարգմանիչ ասորի, Ասուրուքոս. Ովհակոս անունով
Երուսաղէմի Եպիփակոսո (Զենոր, Էջ 17) արդարեւ
յիշում է Եւսեբիսոս իւր Եկեղեցական պատմու-
թեան մէջ (Պալ. Ե. գլ. 12), բայց նաև ըստ Երեւ-
ութիւն, Լուսաւորչեն ժամանակակից չէր կարող լի-
նել: Խակ Եղիազարի բնկերակից Տիմոթեոսը, որ հա-
կառակ Լուսաւորչի բաղձանքին եւ աղերսանքին՝
չկարողացաւ Հայաստան գտալ, — պարապած էր՝
Զենորի ասելով՝ Երուսաղէմի կողմերը “Հառ Ա-ե-
ռոքանին Շաքի հանելոց է նելլինացի Քէր”, — որ նոյն-
պէս կասկածելի է, ինչպէս եւ Եղիազարի թարգ-

¹ Հման. Զենոր. Էջ 11, 14, 16, 17, 23, 24, 49.

մանշական գործունեութիւնը: Տէսնէս անունը հեղինակը կամ հիմինյ ժողովի ցանկից կարող էր առած լինել, ինչպէս ասացի վերը, եւ կամ թերբեւ մի կերպ իմացած համանուն դիտնական Աթեանունեան աւագերեցի մասին, որ ջերմ հետեւող էր Արոգինէսի եւ հմուտ Ա. Գրոց մեկնութեան, ինչպէս աւանդում է Սոկրատ (Է. 6), թէ եւ այդ անձը Կուսաւորչից բաւական ուշ պէտք է ապրած լինի:

4. Ի վերջոյ անցնելով Զենորի Առաջանձունին, այստեղ եւս նկատում ենք անհաւաստի եւ անտեղի կէտեր, որոնք մատնաւմ են նորա բանափառութիւնը:

Կախ Բ'նչ կը նշանակի հեղինակի պյառիսի միամիտ խոստովանութիւնը՝ «Եւ գուք մի ազարտէք զահական Պատմութիւնս, կամ թէ Ադամինակեռու զայդ ոչ յիշէ, զի ես յառաջադրույն զըրեցի քան զնա»: — Կարելի՞ է արգեօք թոյլ տալ պյառիսի մի անհէթեթերեւոյթ, որ աւելի վազ մատենազգողը իրենից յետոյ հեղինակողի մասին վկայէր: Այս յետոյց ընդմիջարկութիւն կամ աղաւազումն չէ, ինչպէս կարծէցին Հ. Գ. Զարբանալեան¹ եւ Լանգուուա². այդ պատճառարանութեան վերայ են հիմուած Առաջարանի յաջորդ տողերը մինչեւ նորա վերջը, մանաւանդ որ սոյնպիսի մի դիտողութիւն անում է հեղինակը նաև 22որդ երեսում. «...Որպէս Ադամթանդեղս պատմէ զայսոսիկ», որից դարձեալ պարզ է որ հեղինակը լաւ ծանօթ է Ագաթանզէցին: Այդ ծանօթութիւնը՝ իրբեւ բանագաղութիւն, մենք արգեն ցցց տուինք վերը՝ համեմատութիւնների շարբում:

Յետ այնորին՝ Բ'նչպէս պէտք է հասկանալ հեղինակի ասածը. «Եւ որ զմագաւորաց ժամա-

¹ Պատմ. Հայերէն Դպր. Բ. տալ. էջ. 217:

² Collection, I, 336.

նակն չգրեցի, վասն զի Ա. Գրիգոր ոչ հրամացեաց պյլ ինչ աւելի զրել քոն զհայցուածն ձեր. մանաւանդ զի պատշաճ համարեցաւ զարշակունի եւ դրաջ թագաւորացն զիր նոռու-լ ոռուն Հայոց եւ ձեզ պատճեն պատափանաւոյ զրել, զր ինքն աշուանեաց . . . Ասորց Պատմութիւնն՝: — Հարկ կար արգեօք առարկելու՝ թէ «զմագաւորաց ժամանակն չգրեցին», ով էր հեղինակից այդ պահանաջողը: Պարզ է, որ նա՝ ծանօթ լինելով Ագաթանցին, տեսել էր եւ զիտեր, որ նութագուրնեաց Արտաւանն, Խոսրով, Արտաշէր, Տրդատ, Կաստանդիիանոս) եւ այս տողերը զրում է Նորա պատմութեան ազգեցութեան ներըցյ՝ անշփառակարար: «Կոյնովէն՝ Բ'նչ էր այդ արշակունի քաջ թագաւորաց չէր ըն, որ Ասւանուորիշ պատշաճ համարեց նոռու-լ տանս Հայոց», եթէ ոչ դարձեալ նոյն Ագաթանգեղ: Եւ Բ'նչ կը նշանակի «Բ'նչու-լ տանս Հայոց»: — Եթէ կար այդպիսի մի չէր (Պատմութիւն) թագաւորացն, միթէ չէր կարելի ամբողջապէս արտագրել Նորան եւ ուզարկել Ասորի: Կոյնուորիներին «պատճեն պատափանաւոյ ն հետ միասին: — Փոքր ինչ սոսորեւ՝ Առաջին Պատճենի վերը (Էջ 39) յիշած հեղինակի անորոշ ակնարկութիւնն եւս — «որ ո՞չ այսոցիկ (այն է՛ Քրիդորի Կեսարիայից վերադարձից, Գիոանէ եւ Գեմետը կուռքերի կործանումից եւ հնանակնեան վանքի հիմնարկութենից յետոյց) զայն նոռուն այլու պատճենքը մինչեւ դարձեալ կրիեն զառնայ պատմութիւնն ի Տարօն . . . պարզ ցցց է տալիս, թէ Զենոր միայն Ագաթանցեղին ունէր ի նկատի: Արգարեւաս «զինի պյառիկ», իւր ՃՃ. զլիից (611 Երեսից) սկսած — աւանդում է, այն անցքերը, որ բաց է նոռու-լ Զենոր, ի հարկէ զիտմամբ, իւր Պատմութեան մլչ. — Ասւանուորչի վերադարձ Այրարարան աշխարհ, Վետնդիս Հայրապետի թուղթը (որ Ագաթանցեղ ագ առ ճ է ն թ թ ո յ ն

զատասխանին ի^ւ է կոչում), Տրդատի, արքունեաց, նախարարների եւ զօրքի մկրտուելը, եկեղեցական եւ գպտցական բարեկարգ թիւններ, Լուսաւորչի առանձնանալը, Ռատակեսի եպիսկոպոս եւ վիճանարդ կարգուելը: Այսուհետեւ ձիւ զլսից (645 երեսից) Զենոր “դարձեալ կրկին դառնայ, Ագաթանգեղի օգնութեան իւր երկրորդ Պատաննի Համար (էջ 40), որը, ինչպէս եւ Ագաթանգեղի ձիւ զլուիր, սկսվում է Կոստանդիանոս Կոյսեր պատմութեամբ:

Աերջապէս ինչն Զենորի զրած թուղթը Լուսաւորիչ “Ասորց Պատմութիւն” պէտք է անուաներ, քանի որ այդ լոկ թուղթը եր միայն Ասորի եպիսկոպոսներին՝ Հայաստանում կատարուած մի քանի անցըերի մասին:

Եղանակացութիւն:

Ըսլոր մինչեւ այժմ ասածներից կարելի է եղանակացնել:

Ա. Զենորի Պատմութեան հեղինակը անտարակոյս ծանօթ էր Ագաթանգեղի, Բուզանդի, Խորենացու նաև Եղեգոսի զրուածքներին. ասպա ուրեմն նա կարող էր ապրած լինել ու լուր է. գարը, եւ ոչ մի կերպ Գ. գարու հեղինակը լինել, մանաւանդ թէ Լուսաւորչին մերձաւոր անձն:

Ենթադրել ընդհակառակը, այսինքն, թէ Զենորի Պատմութենից են փոխ առել յիշեալ մատենագիրները, — բացի սոցա Փաբիուան լուսաւորչի Զենորի մասին, որ շատ կարեւոր ապացոյց է, եւ միւս կողմանէ՝ Քուառուարչ Վեյունինից իրար գոյութեան մասին, — սոցա զրուածքներն եւս ունչունակ Քուառուարչ Վեյունինից են կազմում պատմուող նիւթի

¹ Հմատ. Զենորի Խորագիրների հետ, էջ 7, 9, 40:

մասին եւ արամարանեական կապով կապում նոյն պատմութեան զանազան մասերը: Մինչդեռ Զենորի պատմանձը հատ ու էրոր է, պատուապատաւ եւ նկատելի կերպով ամերզութենից քաշած, հանած մուրացածոյց իրարներ, որնք միայն ազուեսասապէս նաև բռնապօս կերպով կցուած են իրար հետ, ինչպէս տեսանք վերը՝ համեմատութիւնների մէջ:

Բ. — Այս կետերում, ուր Զենոր առընթէր կամ անհամայնչն է իւր խկական աղքիւներին, նա կամ ազգային եկեղեցական յ ետին աւանդութիւններին ազօտ արձագանդ է, եւ կամ առաւելեւու գիտամամբ անհամաձայնութիւններ է առաջացնուած իւր խկական աղքիւներին չնմանուելու, ուրեմն եւ իւր մուրացութիւնը քօղարկելու նպաստակով:

Գ. — Ինստիւտ կամ Գլուխոյ վահու առանձին խնամքի եւ ուշադրութեան արժանացած լինելով հեղինակի կողմից, նա ամեն կերպ ջանք է անուած սորա հնաթիւնը մինչեւ Լուսաւորիչ եւ Տրդատ Հայոցնել, որպէս եւ վահու կալուածները որոշակի նշանակուած սահմանները անպատճառ Հայաստանեայց եկեղեցու առաջին հիմնադիրներից հաստատուած տեսնել, — որ հակառակ է արժանահաւատ աղքիւներին:

Դ. — Թիվները չորս Պատմէնները չինուած են նմանութեամբ շատ այդպիսի գրուածների, թէ եւ բաւական անհմուտ:

Ե. — Զենորի անուածմբ “Ասորց Պատմութիւնը” նախընթաց փաստերի հիմնամբ անվանելով համարելու է, որպէս եւ “Զենոր” կոչումը՝ իւղանական անշուշան Գ. գարուց բաւական ուշ կազմուած:



Զ. Աերջապէս յետ մղելով Զենորի Պատմութիւնը Գ. գարից գեու ի է. մ. գարը, — կարող ենք մասնանիւ լինել եւ այն հեղինակի

¹ Օրինակի համար՝ Համար՝ Համեմատե՝ “Զենորի սկզբուած մէջ բերած Յակոբին ուղղած Լուսաւորչի թուղթը:

վերսոյ, որին հաւանականորեն պատկանում է այդ
աշխատական ժամանակակից գործութեանը՝
Հեղինակ Մամիկոնեան եպիսկոպոս Յովհանն է,
որի գրութեան ոչ մեայն լեզուն եւ ոճը, այլ եւ
ուղղութիւնը, միտումները, հայեցակետը եւ նպա-
տակները նյուն եւ մի են, ինչ որ տեսանք Զենոնի
Պատմութեան մէջ: Ասորերէնից հայերէն թարգ-
ման ելու մասին ուրեմն բնաւ խօսք չէ կարող լինել
այսոնք: Չ'արժէ օրինակներով ստուարացնել
յօդուածիս սահմանափակ էջերը, բաւական է ան-
աշառ բանասիրին փոքր ինչ քննողական աշքով
դիտել այս գրուածքները, որպէս զի՞նա համազարի,
թէ երկուսն եւս համատիպ եւ համանման են՝
միեւնոյն հեղինակի գրչի, մոքի, եւ նպատակի
արգասիք:

Մովուա, 2 Յունիսի 1893

Գ. ԽԱՆԱԹԵԱՆ



Էջ 48, տող 21 աւելացնելու է.

ԱԵԺԻՆ ԿԵՐԱԲԻՆԻ պատմութեան մէջ եւս մի
քանի օրինակներ յիշում են ՌԵՊԵՆ անունով
Վրաց նահապետ, որ անշուշտ Պ. գարու վերջերին
պէտք է վերաբերուի: (Ա. Ք. Ղ. Զ., Էջ 53:)